

6822a

9800

ՀԱԽԶ ԼՈՒՍ. ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ—ՍՈՑ. ԴԱՍ. ԳԼԽ. ՎԱՐԶ.

ԱՇԽ. Ա. ԱՍՏԻՃ. ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՆՈՒԹՅՈՒՆ 4 ԱՇԽԱՏԱՆՔ № 8

Խմբ. Մ Զառաֆյանի յեղ Ա. Արարատյանի



ԻՆՉ ՎՈՐ ԿԸ ՑԱՆԵՍ,

ԱՅՆ ԵԼ ԿԸ ՀՆՁԵՍ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹ.

Յ Ե ր Ե Վ ա Գ — 1 9 2 7

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ


№ 8 «ԲՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ» № 8  
Խմբ. Մ. Զառաֆյանի յեզ Ա. Արարատյանի

631.52

A  $\frac{I}{4379}$

~~15997~~  
~~16651~~

ԻՆՉ ԿՈՐ ԿՑԱՆԵՍ  
ԱՅՆ ԵԼ ԿՅՆՁԵՍ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Բ Կ Վ Ս Ե — 1 9 2 7

## 1. ԻՆՉՈՒ ՅԵՆ ՍԵՐՄԸ ՅԱՆՈՒՄ

Այսպիսի ել հարց կտան: Ցանելու նպատակն այնքան պարզ է, վոր կարծես, չարժե նույն իսկ այդ մասին հարց տալ:

Սակայն չեկեք, հակառակ ընդհանուր կարծիքի, այս հարցի շուրջը մի փոքր մտածենք:

Այս հարցը կարելի չէ չերկու մասի բաժանել. ա. ինչ նպատակով են սերմը ցանում և բ. ինչո՞ւ չեն հատկապես սերմը ցանում և վոչ թե բույսի այլ մասը:

Ի ուրս ել պարզ գիտենք, վոր գյուղացին վորոշ բեռք ստան սլու համար է սերմը ցանում: Նա միանգամայն հավատացած է, վոր ամեն բույսի սերմից նույն տեսակի բույս կստանա: Այդպատճառով ել չեթե նա ցանկանում է իր հողից ցորեն ստանալ, ցորեն է ցանում, չեթե կանեփ է ուզում ստանալ՝ կանեփի սերմ է ցանում:

Սա մի շատ սովորական, բայց հետաքրքիր չերեվույթ է: Ինչ ել անեք. չերբեք ցորենի հատիկից զարի չեք ստանա, ինչպես վոր չերբեք


բաղի ձվից՝ հավ, կամ մի այլ թռչուն ստանալ  
 չեք կարող: Այստեղ հարմար է ասել ժողովրդա-  
 կան առածը թե՛ «ինչ վոր կցանես այն ել  
 կ՛նճես»:

Ինչ վերաբերում է չերկրորդ հարցին՝ թե  
 ինչու չեն սովորաբար միամյա բույսերի սերմը  
 ցանում և վոր թե բույսի այլ մասերը՝ տերեւը,  
 արմատը կամ ցողունը, — ուղղակի պատասխանել  
 չեք կարող: Դրա համար պետք է նախ ուսումնա-  
 սիրենք սերմի կազմը:

## 2. ՍԵՐՄԻ ԿԱԶՄԸ

Վերցրեք մի քանի խո-  
 շոր սերմեր և մեկ չերկու-  
 որով ջրի մեջ պահեք: Այս  
 աշխատանքի համար լավ են  
 լոբու, սիսեռի, վոլոճնի,  
 մոշի, բակլայի, ցորենի,  
 սիմինդի սերմերը:

Ջրի մեջ նրանք ուռ-  
 չում են և փափկում, այդ  
 հանգամանքը հեշտացնում  
 է մեր ուսումնասիրության  
 դործը:




Նկ. 1 Լոբու սերմի կազմը և ծրումը

Յեթե վերցնենք վորևէ ընդեղենի ուռած  
 սերմը և ասեղով քանդենք, կտեսնենք հետևյալը.  
 Նա դրսից պատած է կեղևով, վորը պաշտպանում է  
 սերմն արտաքին ազդեցություններից՝ ցրտից,  
 տաքից, վնասատուներից: Կեղևի ներսում մենք  
 կտեսնենք չերկու հաստ մասեր, վորոնք մի  
 ծայրում իրար միացած են: Յեթե՝ զգուշորեն  
 բացենք այդ մասերը, կտեսնենք, վոր նրանք  
 խակապես իրար շեն միացած, այլ նրանց արան-  
 քում գտնվող փոքրիկ ծիլին են կպած: Այդ հաստ  
 մասերը կոչվում են շաքիլներ: Ասացի՛ք, վոր  
 նրանց արանքում մի փոքրիկ ծիլ կա, այդ ծիլն  
 ունի արմատիկ, ցողունիկ, վորից կպած են շա-  
 քիլները և ցողունիկի ծայրին չերկու մանր տե-  
 րեկիկներ: Ինչպես տեսնում եք, սերմի մեջ ապա-  
 գա ամբողջ բույսն իր բոլոր հիմնական մասերով  
 արդեն պատրաստ կա: Սերմի բովանդակու-  
 թյունն այն սաղմն է, վորից պիտի առաջ գա  
 ապագա բույսը:

Ինչո՞ւ համար են շաքիլները: Դրան պատաս-  
 խանելը շատ հեշտ է: Մի քանի սերմ ծլեցնենք  
 խոնավ ավազի կամ թեփի մեջ: Յերբ առաջին  
 տերեւները կբացվեն, մի քանիսի շաքիլները կամ  
 մեկական շաքիլը կտոկենք: Մի քանի որից կնկա-  
 տենք, վոր լրիվ շաքիլներով ծիլերն առողջ զար-  
 գանում են, մի շաքիլ ունեցողները թույլ են

գարգանում, իսկ շաքիլներից դուրկ ծիլերն արգեն չեա են մնում և սկսում են փչանալ: Այստեղից պարզ է, վոր շաքիլները սննդանյութի պահեստ են: Քանի դեռ ծիլն ուժեղ արմատ չունի, ինքնուրույն կերպով սնվել չի կարող. նա ի հաշիվ շաքիլների պաշարի չե գարգանում:



Նկ. 2. ցորենի սերմի կազմը և ծլումը


րին: Սննդապաշարը լցված է ներսում սպիտակուց կոչված մասում: Ունի միայն մի փոքր

տեղից պարզ է, վոր շաքիլները սննդանյութի պահեստ են: Քանի դեռ ծիլն ուժեղ արմատ չունի, ինքնուրույն կերպով սնվել չի կարող. նա ի հաշիվ շաքիլների պաշարի չե գարգանում:

Վերցնենք ցորենի սերմը: Նա նույնպես կեղեվով է պատված, վորն ամուր կպած է բովանդակությանը: Յեթե սուր դանակով կտրենք թըրշած ցորենը, կը տեսնենք, վոր նրա ծիլը տեղավորված է հատիկի մի ծայր

շաքիլ, վոր վահանիկ է կոչվում, այդ վահանիկով է սնունդը սպիտակուցից ծծվում և դեպի ծիլը գնում:

Այժմ պարզ է, թե ինչու գյուղացին սերմն է ցանում և վոչ թե բույսի այլ մասերը: Սերմի մեջ գտնվում է բույսի սաղմը: Սաղմը բույսի փոքրիկ նախատիպն է. նա ունի արմատիկ, ցողունիկ և տերևիկներ: Բացի այդ՝ սաղմն իր տրամադրության տակ սննդանյութի պաշար ունի, վոր նա գործ է ածում սկզբնական շրջանում գարգանալու համար:



Բացց դուք կասեք, վոր չեք բերեմն գյուղացին տնկում է և բույսի այլ մասերը, որինակ կարտոֆիլի պալարը կամ սոխի կոճղեսը: Թե կարտոֆիլի պալարը և թե սոխի կոճղեսը ձևափոխված ցողուններ են, վորոնց մեջ կան բողբոջներ: Կտրեք սոխը դուք

Նկ. 3 Սոխի կոճղեսը կարված և թե սոխի կոճղեսը ձևափոխված ցողուններ են, վորոնց մեջ կան բողբոջներ: Կտրեք սոխը դուք

մեջ տեղում կտեսնեք այդ բողբոջը: Կարտոֆիլի պալարի վրա աչքեր կան, վորոնք նույնպես բողբոջ են: Յեթե կարտոֆիլի պալարի բոլոր աչքերը կտրեք և այդպիսի պալարը տնկեք, վորչինչ չեք ստանա: Թե կարտոֆիլի պալարը և թե սոխի կոճղեսը բացի բողբոջից՝ վերջինիս դարգացման համար անհրաժեշտ սննդանյութեր ել ունեն:

### 3. ՍԵՐՄԻ ԾԼՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Յեթե հարց ու փորձ անեք գյուղացուն, դուք նրանից կիմանաք, վոր հին սերմը սոխորաբար իբրև սերմացու չեն գործածում: Գործածելիս ել անհրաժեշտ քանակից շատ են վերցնում, վորովհետև ժամանակի ընթացքում այլ և այլ պատճառներից սերմերը կորցնում են ծլելու ընդունակութունը:

Այդ պատճառով ել նախ բան ցանելը ստուգում են արդյոք սերմերը ծլունակ են թե վոչ:

Առանց ընտրելու վերցնում են հարյուր հաս սերմ և խոնավ ավազի վրա ծլեցնում են: Ամեն որ հետևում և գրի լեն առնում թե քանիսն են ծլել: Յերբ վոր սերմերը դադարում են ծլել, հաշվում են, թե ընդամենը քանիսն են ծլել. այդ թիվը, վոր ցույց է տալիս, թե հար-

յուր հատիկից քանիսն են ծլել դրանով վորոշում ե ավյալ սերմի ծլունակութունը: Կավ են համարվում այն սերմերը, վորոնք միահամուռ են ծլել, իսկ մեծամասնութունից շուտ կամ ուշ հատուկենա ծլողներն անցանկալի չեն համարվում:

Յերբ սերմացվի ծլունակութունը շատ ցածր է, ձեռնաու չե իբր մթերք գործածել և տեղը թարմ ու ծլունակ սերմացու ձեռք բերել: Իսկ չեթե ստիպված են այդ ցածր ծլունակութուն ունեցող սերմացուն ցանել, ապա սլարգ է, վոր սովորական քանակից շատ պիտի վերցնեն: Հակառակ դեպքում շատ նոսր արտ կունենան:

### 4. ԻՆՉՊԻՍԻ ՍԵՐՄ ՑԱՆԵԼ

Սերմացու ընտրելիս շատ մեծ նշանակութուն ունի, թե ինչ այլատեսակ են վերցնում: Որինակ՝ ցորենը բազմաթիվ այլատեսակներ և ցեղեր ունի, վորոնք իրարից տարբերվում են հատիկի ձևով, գույնով և մեծութամբ, հասկի կազմով, գույնով, քիստավոր կամ անքիտ լինելով և այլ նշաններով: Այդ բոլոր այլատեսակներն ամեն տեղ ել լավ բերք չեն տալիս: Նրանցից չուրաքանչյուրը վորոշ պայմաններում ե միայն շատ և լավ բերք տալիս: Նույնպես և մնացած բույսերը բազմաթիվ այլատեսակներ ունեն. սրան-

ցից յուրաքանչուրը վորոշ պայմաններում և միայն լավ աճում և շատ բերք տալիս: Ահա այդ պատճառով ել սերմացու ընտրելիս միշտ նախորդ գյուղատնտեսի կամ փորձված գյուղացիների հետ խորհրդակցում են:

Բացի այդ սերմացուն պետք է լինի ծանրաբաշ և մաքուր: Յեթե մի բուռ ցորեն վերցնեք և ուշի ուշով դիտեք, դուք այնտեղ կտեսնեք և ծանր, լի հատիկներ, և վտիտ ու չմշկածներ, ջարդածներ և ոտար սերմեր՝ գլուխով, գժուկ, այլն:

Փորձերը ցույց են տվել, վոր ծանրաբաշ հատիկներն ավելի շատ բերք են տալիս քան վտիտները: Այսպես որինակ՝

100 վատ սերմից աճած բույսերը տվել են

200-գր. հատիկ

» խոշոր » » 363 » » »

Չարդած հատիկները միանգամայն իգուր են ցանվում, ավելի լավ է այն ջուկել և իբր կուտ տալ հավերին:

Մուլախոտերի սերմերն ուղղակի փաստակար են, գյուղացին հատիկի հետ մուլախոտերի սերմեր ցանելով ինքն իր ձեռքով իր թշնամիների թիվը շատացնում է: Մուլախոտերը հողից սնունդ են վերցնում և մշակովի բույսին քիչ են թողնում: Նրանք իգուր ջուր են գոլորշացնում

և հողը շորացնում են: Բացի այդ՝ նրանք ծածկում են մշակովի բույսերին, լույսը խլում են և իվերջո նրանց խեղդում: Ահա թե ինչու են կռվում մուլախոտերի դեմ. այդ կռիվը սկսում են սերմացուն գտելով:

Այստեղ միանգամ ևս, բայց ուրիշ մտքով, կարելի չե կրկնել ժողովրդական առածը, թե «ինչ վոր կցանես այն ել կհնձես»: Ընտրովի գտած սերմացու կցանես, լավ վորակի ու մեծաբանակ ել բերք կստանաս: Իսկ յեթե վատ, չգտած և վտիտ սերմացու կցանես, վատն ել կստանաս և դեռ տարեց տարի բերքն ավելի կվատանա:

## 5. ՍԵՐՄԻ ԶՏՈՒՄԸ

Ծանրաբաշ, առողջ սերմերը ջուկելու և մուլախոտերից անջատելու համար սերմացուն գտում են: Նախ սերմացուն ածում են աղաջրի մեջ և խառնում, բոլոր մրիկոտ և թեթև հատիկները ջրի չերեսն են բարձրանում և նրա հետ հեռանում են:

Այնուհետև հատիկը շորացնում են և ձեռքով ընտրում, մաղում կամ հատուկ մեքենաներով գտում:

Սերմացուն գտելու համար շատ տեսակի մեքենաներ կան, վորոնք սրագացնում են ձեռքի

աշխատանքը և հնարավորութիւնն են տալիս  
կարճ ժամանակում մեծ քանակով սերմացու  
գտել:

Ներկայումս ամենատարածված սերմագտիչը  
«Տրիլեր»-ն է: Նրա հիմնական մասերն են հա-  
տիկի ընդունիչը և գլանը: Ընդունիչը ձագարա-  
ձեւով անոթ է, վորի մեջ ածոււմ են սերմացուն:  
Դրա տակը տեղավորված են հատուկ մաղեր,  
վորոնք անց են կացնում սերմացուն. բայց ավե-  
լի խոշոր մասերը չեն անց կացնում: Այնուհետև  
սերմացուն մտնում է դանդաղ պտտվող գլանը:  
Գլանը մի փոքր թիք է դրված: Նրա վերին մասը  
մաղածէ է: Այդ մասով մաղվում են հատիկից  
մանր մասերը:

Գլանի միապաղաղ մասին հասնելիս սեր-  
մացվի մեջ մնում են հատիկները և հատիկի  
չափ բայց կլոր մասերը՝ գլուխը, շարդված  
հատիկները:

Յեթե դրսից միապաղաղ չերևացող գլանի  
ներսը նայեք կտեսնեք, վոր ըրա մակերեսը ներսից  
զոգավոր փոսիկներ ունի: Գլուխը և շարդ-  
ված հատիկները մտնում են այդ փոսերի մեջ և  
գլանի պտույտների ժամանակ բարձրանում և  
ընկնում են հատուկ կիսախողովակի մեջ: Այս-  
պիսով մեքենայից ամբողջ հատիկները դուրս են  
գալիս մի անցքից. հատիկի չափ, բայց այլ ձևի

մասերը՝ մի ուրիշ անցքից, հատիկից մանր մա-  
սերը՝ գլանի վերին մասից, իսկ հատիկից խոշոր  
մասերը՝ սկզբի մաղերի վրայից:

## 6. ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՅԱՆԵԼ


Ահա մի հարց, վորի վրա վոչ վոք չի գար-  
մանա: Փորձից հայտնի չէ, վոր չերբեմն ստիպ-  
ված ենք լինում միևնույն տարին նույն տեղում  
չերկրորդ անգամ ցանել: Յերբեմն էլ ընդհակա-  
ռակը մի տարվա ցանածը միայն հետևյալ տա-  
րին է ծլում: Պարզ է, վոր սերմի ծլման հա-  
մար վորոշ պայմաններ են հարկավոր: Այդ պայ-  
մաններից են կախված մասամբ այն հարցերը  
թե չերբ պիտի ցանել, ինչ խորութեան վրա  
պե՞տք է թաղել սերմերը, ինչպես պիտի լինի  
հողը՝ փուխը թե ամուր:

## 7. ՍԵՐՄԻ ԾԼՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վերցնենք չերկու աման և մեջները հավա-  
սարաչափ սերմեր ածենք. դիցուք հիսունական  
դրամ: Ամաններից մեկում ջուր ածենք, մյու-  
սում՝ վոչ: Հետևյալ որը կը տեսնենք, վոր  
չոր ամանում սերմերը մնացել են անփոփոխ,



մինչդեռ մյուսում նրանք ուռել են: Յեթե այդ սերմերը հանենք, սրբելով յերեսից ցամաքաց-



Նկ. 4. Ծելու համար ջուր և հարկավոր

նենք և կշռենք, կտեսնենք, վոր կշիռն ավելացել է: Նախ բան ծելը սերմերը պիտի ուռչեն, իսկ դրա համար ջուր և հարկավոր:

Հիմա փորձենք թե ծելու համար ջերմությունն ինչ նշանակութուն ունի: Վերցնենք յեր-




կու ափսե, վրաները թրջած բամբակ կամ ծծան թուղիլ փոխք, յերկուսի մեջ էլ նույնքան

հաստ ուռած սերմեր դնենք և վրայից թրջած բամբակով կամ ծծուղ թղթով ծածկենք: Ափսեներից մեկը թողնենք տաք սենյակում, իսկ մյու-

սը տանենք սառ նկուղ: Դուք կտեսնենք, թե ինչպես տաք սենյակում սերմերը ծլում են և դարգանում, մինչդեռ սառ տեղում նրանք չեն ծլում և յեթե յերկար ժամանակ այնտեղ թողնենք, սերմերը բորբոսնում և փչանում են:

Այժմ տեսնենք, թե ինչպես են դարգանում նրանք թարմ ոգի ներկայության և բացակայության դեպքում: Վերցնենք յերեք բաժակ, մեջներն ածենք հավասարաչափով ուռած սերմեր: Բաժակներից մեկը բաց թողնենք, բայց խոնավ պահենք: Մյուսը՝ ջրով լեցնենք: Յերրորդն՝ ամուր խցենք, այնպես վոր դրսի թարմ ոգը չկարողանա ներս մտնել: Յերեք բաժակն էլ դնենք




Նկ. 6. Ծելու համար ոգ և հարկավոր

տաք տեղ: Մենք կտեսնենք թե ինչպես կանոնավոր կերպով ծլում և աճում են բաց բաժակի

սերմերը: Մյուս յերկուսի մեջ մենք նկատելի  
փոփոխություն չենք տեսնի, այս յերկու բաժա-  
կում սերմերն առանց թարմ ողի չեն ծլում:

Փորձենք պարզել նաև լույսի նշանակու-  
թյունը: Վերցնենք յերկու ամպ, և մեջները



Նկ. 7. Ծլելու համար լույսն անհրաժեշտ չէ

ուռած սերմեր ածենք: Մեկը ծածկենք միան-  
գամայն մութ արկղով, մյուսը՝ ապակե անո-  
թով: Յեթե վորոշ ժամանակից հետո համեմա-  
տենք, կտեսնենք, վոր յերկու տեղում ել սեր-  
մերը կանոնավոր ծլել են: Պարզ է, վոր լույսը  
ծլելու վրա ազդեցություն չի գործում: Սակայն  
եթե նույն փորձը մենք շարունակենք, կտես-  
նենք, վոր լույս տեղում ծիլերը շարունակում են

կանոնավոր ածել և կանաչ տերևներ տալ, մինչդեռ  
մութ արկղի մեջ ծիլերը ձգվում, յերկարում են,  
բայց վոր ցողունը և վոր ել վախ տերևները  
չեն կանաչում:

Ուրեմն ծլման համար անհրաժեշտ են խո-  
նավություն, ջերմություն և թարմ ող:



Այստեղից պարզ է, վոր յեթե դարձանք  
շատ վաղ ցանենք, թեև սերմերը կուռչեն, բայց  
չեն ծլի կամ յեթե ծլեն ել կցրտահարվեն:

Ուշ ցանելիս ել հողը չորացած է լինում և  
սերմերը չեն ծլում:

Յեթե հողը շատ խոնավ լինի կամ ամուր,  
այս անգամ ել սերմերը թարմ ողի բացակա-  
յությունից կխեղդվեն: Բացի այդ, դալար ծիլը  
չի կարող պինդ հողը պատռել: Ուրեմն հողը պի-  
տի փխրուն լինի: Բայց յեթե հողը շատ փուխր  
լինի, սերմերը բավական խոնավություն չեն  
կարող ծծել և ուշ կծլեն կամ չեն ծլիլ: Այդ  
պատճառով ել ցանելուց հետո հողը տափանում են:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչ  
խորության վրա պիտի թաղել հատիկները, այս  
տեղ կարող ենք ասել հետևյալը: Յանքսի խո-  
րությունը կախված է նախ սերմի մեծու-  
թյունից, վորքան խոշոր է սերմը, այնքան կա-  
րելի յե խոր թաղել և ընդհակառակը: Յերկ-  
րորդ՝ կախված է հողի փխրունությունից:

A 4372  
15997



վորքան հողն ավագոտ ե և փուխը՝ այնքան կարելի յե և պետք ե խոր թաղել, վորպեսզի կարողանա ջուր ծծել:

Ուրեմն՝ նայած տեղին և սերմի տեսակին այն ժամանակ են ցանում և այնպիսի խորութիւնն ընտրում, վոր սերմերն իրենց տրամագրութիւն տակ բավական ոգ, խոնավութիւն և ջերմութիւն ունենան:

### 8. ԻՆՉՊԵՍ ՑԱՆԵԼ

Վերևում տեսանք, վոր սերմերը պետք ե վորոշ խորութիւն վրա թաղվեն: Շատ չերես ընկածները թռչունների բաժին կդառնան կամ շորութիւն պատճառով շատ ուշ կծլեն: Շատ խոր ընկածներն ել թեև շուտ կուռչեն, բայց ողի և ջերմութիւն պակասութիւն պատճառով կարող են չծլել: Նույնիսկ չեթե ծլեն ել, ծիլերը կարող են հողի յերեսին չհասնել:

Հապա ինչպես ցանել՝ շաղացան թե՛ շարքացան:

Այժմ վոչ վոք չի կարող ասել, թե շաղացանը շարքացանից լավ ե: Շաղացանի դեպքում սերտացուն թե արտի յերեսին և թե հողի խորութիւն մեջ շատ անկանոն ե դասավորվում: Նրա մի մասը յերես ե ընկնում և թռչունների

բաժին դառնում, մի մասն ել շատ խոր ե



ընկնում և փշանում կամ վտիտ ծիլ ե տալիս: Կամ ծլած հատիկներն ել այնքան անկանոն են դասավորվում, վոր իրար խանգարում են և հետադայում կանոնավոր չեն աճում: Ահա թե ինչու շաղացանը վատ ձև ե համարվում: Այսպիսի ձև

Նկ. 8. Սերմերի դասավորութիւնը շաղացանի դեպքում

գործածող տնտեսները հողը փորփրելով հազիվ հազ կարողանում են իրենց գոյութիւնը քաշ տալ կեղտի և չքավորութիւն մեջ:

Ներկայումս այն տնտեսութիւններում, վորտեղ մարդիկ ցանկանում են մարդավայել ապրել, միայն շարքացան են անում:

### 9. ՇԱՐՔԱՑԱՆԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Շարքացանն անում են հատուկ մեքենաների միջոցով: Այդ մեքենայի գլխավոր մասերն են ա. սերմի արկղը, վոր տեղավորված ե ակների

արանքում, բավական բարձր, բ. հատուկատամ-



Նկ. 9. Արտը՝ շաղապանից հետո

հավոր գլան, վոր պատվում է այդ արկղի ցածի մասում և մեկ-մեկ բաց է թողնում սերմերը,




Նկ. 10. Շարքացան մեքենա

զ. զսպանակավոր խողովակները, վորոց ծայրին խոփիկներ կան:

Յերբ վոր ձիերը քաշում են մեքենան, ակներին շարժումից ատամնավոր գլանը պտտվում է և սերմը մեկ-մեկ բաց թողնում: Այդ սերմերը խողովակի միջով ընկնում են այն ակոսի մեջ, վոր փորում է խողովակի ծայրի խոփիկը: Խոփիկի յետևից ակոսն ինքնաբերաբար ծածկվում է հողով և թաղում հատիկը:

Այս նկարագրից պարզ է, վոր մարդուց է կախված, թե սերմերն ինչ խորությամբ և ինչ խտությամբ կցանի: Խողովակները բարձրացնելով և իջեցնելով նա կարող է այնպես հարմարեցնել,

վոր սերմերն ընկնեն ուղած խորության վրա: Բացի այդ՝ հատուկ կանոնավորիչ միջոցով նա կարող է հարմարացնել և խտությունը: Հստ ցանկության կարելի չէ մի հեկտարի վրա համաչափ կերպով ցանել 90, 120 կամ 140



Նկ. 11. Սերմերի գասավորությունը շարքացանի դեպքում կիրո հատիկ: Մինչդեռ մեր գյուղացին շաղապանի դեպքում մի հեկտարի վրա գործ է ածում 160—225 կիրո հատիկ:

Այստեղից պարզ է, թե ինչ առավելութուններ ունի շարքացանը: Նրա շնորհիվ մեծ քանակով սերմացու յե տնտեսվում: Յեթե մի հեկտարից մոտ 80—100 կիլո յե տնտեսվում, ապա վորքան կտնտեսվի մի յերկրում, ուր մի քանի միլիոն հեկտար են ցանում:

Բացի այդ՝ շարքացանը սերմերը վորոշ խորության վրա թաղելով նպաստում է հրանց միահամուռ ծլելուն: Միաժամանակ ծլած բույսերը միասին ել աճում են և հասնում: Բերքը հա-



Նկ. 12. Արտը շարքացանից հետո

վաքելիս հնձողը գործ ունի միապաղաղ, հասած, նույն բարձրություն ունեցող, առողջ բույսերի

հետ: Մինչդեռ այդպես չե շաղացանի դեպքում, այստեղ սերմերը տարբեր խորության վրա չեն ընկած հետևապես տարբեր ժամանակ ել ծրլում, աճում և հասնում են: Այն ժամանակ, յերբ հասկելի մի մասը կծղում է և հատիկները թափում, մի ուրիշ մասը դեռ կանաչ է: Պարզ է, վոր այս հանգամանքն ել շաղացանի դեպքում վորոշ չափով պակասեցնում է գլուղացու բերքը:

Վերջապես շարքացանի ժամանակ բույսերը վորոշ հեռավորությամբ և շարքերով են դասավորվում: Այս դեպքում բույսերը լավ և ամեն կողմից համաչափ են լուսավորվում, իսկ մշակողին շարքացանը հնարավորություն է տալիս պետք յեղած դեպքում զանազան գործիքներով և մեքենաներով քաղհան կատարել և կամ հողը փխրացնել: Այսպիսի աշխատանք կատարելը շաղացանի դեպքում շատ դժվար է և թանգ է նստում:

Այս գրքուկով դուք իմացաք, վոր բավական չե միայն լավ սերմ ցանել, լավ բերք ստանալու համար. ելական է նաև, թե ինչ պայմաններում և ինչով են ցանում:

Ժողովրդական առածը թե՛ «ինչ վոր կցանես այն ել կհնձես» ճիշտ է միայն սերմացուն ընտրելու և զտելու վերաբերմամբ:

Ց Ա Ն Վ

Ե՞

1. Ինչու լին սերմը ցանում.	3
2. Սերմի կազմը.	4
3. Սերմի ծյուծակաթյունը.	8
4. Ինչպիսի սերմ ցանել.	9
5. Սերմի գառնիք.	11
6. Ինչ պայմաններում ցանել.	13
7. Սերմի ծյուծան պայմանները.	13
8. Ինչպես ցանել.	18
9. Շաբաղացանի սուսփելու թյունները.	19



[044]

ՀՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԿՈՒՅՆ ԳՐԱԴԱՐԱՆ

A I  
4372

- 1. Տերեվաթափ և աշնան գուլյներ . . . . .
- 3. Թռչունների չուկն . . . . . 10 »
- 4. Պտուղներ և սերմեր . . . . . 10 »
- 11. Բամբակ . . . . . 10 »
- 12. Տորֆ, քարածուխ և նավթ . . . . . 10 կ.
- 16. Մեղու . . . . . 15 »
- 20. Հանքեր . . . . . 15 »
- 21. Շերամ . . . . . 10 »

ՇՈՒՏՈՎ ՀՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

- 2. Կենդ. հարմարացուժը և ձմեռային քուկը . . . . .
- 5. Հող և նրա մշակուժը . . . . .
- 6. Բանջարանոց . . . . .
- 7. Այգի . . . . .
- 9. Մարդագետին . . . . .
- 10. Ող և ջուր . . . . .
- 13. Կովի կերը և խնամքը . . . . .
- 14. Կաթնամթերքներ . . . . .
- 15. Ընտանի թռչունների խնամքը . . . . .
- 17. Գյուղատնտ. մեքենաներ և գործիքներ . . . . .
- 18. Ակվարիում և տերրարիում . . . . .
- 19. Ինչպես կազմել հերթարիում . . . . .
- 22. Անտառ . . . . .